Նախագիծ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ

ՈՐՈՇՈՒՄԸ

<<2020 թվականի սեպտեմբերի 27-ին սանձազերծված ռազմական գործողությունների հանգամանքների ուսումնասիրման նպատակով>> ստեղծված Ազգային Ժողովի քննիչ հանձնաժողովի գործունեության ժամկետը երկարաձգելու մասին

ՀՀ Ազգային Ժողովը որոշեց «Ազգային Ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 20-րդ հոդվածի 7-րդ կետի համաձայն՝ «2020 թվականի սեպտեմբերի 27-ին սանձազերծված ռազմական գործողությունների հանգամանքների ուսումնասիրման նպատակով» ստեղծված Ազգային Ժողովի քննիչ հանձնաժողովի գործունեության ժամկետը երկարաձգել 6 ամսով:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«2020 թվականի սեպտեմբերի 27-ին սանձազերծված ռազմական գործողությունների հանգամանքների ուսումնասիրման նպատակով» ստեղծված Ազգային Ժողովի քննիչ հանձնաժողովը տարբեր գերատեսչություններից պահանջել և ստացել է բազմաքանակ փաստաթղթեր, որոնք մանրամասն ուսումնասիրելուց հետո անցել է հրավիրյալներին լսելու փուլին:

Հանձնաժողովի աշխատանքների հաջորդ փուլը իրականացնելու համար խիստ անհրաժեշտ է հանձնաժողովի գործունեության ժամկետը երկարացնել առնվազն 6 ամսով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ԱԼԵՆ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն ՍԻՄՈՆՅԱՆ,

2020 թվականի սեպտեմբերի 27-ին սանձազերծված ռազմական գործողությունների հանգամանքների ուսումնասիրման նպատակով ստեղծված քննիչ հանձնաժողովը 07.04.2023թ.-ին տեղի ունեցած նիստում որոշել է առաջարկով դիմել Ազգային Ժողովին՝ «Ազգային Ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 20-րդ հոդվածի 7-րդ կետի համաձայն՝ հանձնաժողովի լիազորությունների ժամկետը երկարաձգել 6 ամսով:

Կից ներկայացվում է Ազգային Ժողովի որոշման համապատասխան նախագիծը:

Խնդրում եմ հարցի քննարկումը «Ազգային Ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 38-րդ հոդվածի 3-րդ մասի 15-րդ կետի համաձայն ընդգրկել Ազգային Ժողովի հերթական նիստերի օրակարգում:
Ազգային Ժողովի նիստում հարցի քննարկման ժամանակ որոշման նախագիծը կներկայացնի <<2020 թվականի սեպտեմբերի 27-ին սանձազերծված ռազմական գործողությունների հանգամանքների ուսումնասիրման նպատակով>> ստեղծված քննիչ հանձնաժողովի նախագահը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ ***ԱՆԴՐԱՆԻԿ ՔՈՉԱՐՅԱՆ***

2020 թվականի սեպտեմբերի 27-ին սանձազերծված ռազմական գործողությունների հանգամանքների ուսումնասիրման նպատակով քննիչ հանձնաժողով

Քաղվածք
Նիստի արձանագրությունից

07.04.2023թ.
Ժամը 15:30

Հանձնաժողովը որոշեց առաջարկով դիմել Ազգային Ժողովին՝ «Ազգային Ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 20-րդ հոդվածի 7-րդ կետի համաձայն «2020 թվականի սեպտեմբերի 27-ին սանձազերծված ռազմական գործողությունների հանգամանքների ուսումնասիրման նպատակով» ստեղծված Ազգային Ժողովի քննիչ հանձնաժողովի գործունեության ժամկետը երկարաձգել 6 ամսով:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ *ԱՆԴՐԱՆԻԿ ՔՈՉԱՐՅԱՆ*